

ՍԱՂՄՈՍ 63

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ծարավ հոգին Աստծո մեջ է հազնում	Ուրախ Աստծո հետ հաղորդակցվելիս	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Աստծուն փափագող	Աստծուն տենչացող
<u>MT ներածություն</u> Դավթի սաղմոսը, երբ նա Հուդայի անապատում էր				
63:1-5	63:1-2 63:3-5	63:1-4 63:5-8	63:1-5	63:1-2 63:3-5
63:6-8	63:6-8		63:6-8	63:6-8
63:9-11	63:9-11	63:9-11	63:9-11	63:9-11

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Չարմանալիորեն այս Սաղմոսը չունի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ կամ ԸՂԶԱԿԱՆՆԵՐ:
- Բ. Այս Սաղմոսը չի հորդորում ուրիշներին, այլ նկարագրում է Աստծո հետ խորը, անձնական փոխհարաբերության փնտրտուք (տես՝ Սաղմ. 42:1-4):
- Գ. Բազմաթիվ այլ Սաղմոսների պես թշնամիների հետ լարվածության կողմը առկա է (տես՝ Սաղմ. 63:9-11): Սաղմ. 63:11-ի պատճառով սա արտացոլում է Թագավորի մտքերը, հետևաբար նրանք կարող են լինել՝

1. Օտարականներ
2. անհավատ իսրայելացիներ

Դ. Սաղմոս 63:11ա ինքնաբերաբար Սաղմոսը չի դարձնում արքայական Սաղմոս. տես՝ Սաղմ. 63:9-11-ի գրառումը այլ տարբերակների համար:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 63:1-5

¹Ո՛վ Աստված, Դու ես իմ Աստվածը,
 Վաղ առավոտից ես Քեզ եմ փնտրելու.
 Հոգիս Քեզ է ծարավում, ու մարմինս Քեզ է փափագում
 Չոր ու ծարավուտ վայրում, ուր ջուր չկա:
²Քո զորությունն ու փառքը տեսնելու համար,
 Ինչպես որ Քեզ տեսել եմ սրբարանում:
³Որովհետև Քո գթասիրությունը կյանքից ավելի լավ է,
 Իմ շրթունքները Քեզ պիտի փառաբանեն:
⁴Այնպես պիտի օրհնեմ Քեզ իմ կյանքի ընթացքում,
 Քո անունով ձեռքերս վեր պիտի բարձրացնեմ:
⁵Իմ անձը կշտանալու է՝ ինչպես ոսկրածուծով ու պարարտությամբ,
 Եվ ուրախ շուրթերով է Քեզ փառաբանելու իմ բերանը:

63:1-5 Այս պարբերության մեջ սաղմոսերգուն նկարագրում է, թե ինչ է զգում Աստծո հանդեպ (Սաղմ . 63:1, *Էլփիս* և *Էլ*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ):

1. Նա փափագով փնտրում է Նրան (բառացի՝ «վաղ է փնտրում») – BDB 1007, KB 1465, *Piel* ԱՆԿԱՏԱՐ (տես՝ Սաղմ. 78:34, Առակ. 7:15, 8:17, Եսայի 26:9, Ովս. 5:15). այս նույն արմատը որպես ԳՈՅԱԿԱՆ է «արշալույս» բառի համար (տես՝ Սաղմ. 57:8):
2. նրա անձը (բառացի՝ *nephesh*, BDB 659) ծարավում է Աստծուն – BDB 854, KB 1032, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 42:2, 84:2, Մատթ. 5:6
3. նրա մարմինը (BDB 142) փափագում է Աստծուն – BDB 484, KB 480, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ. ՀԿ-ում միայն այստեղ է: Արաբերեն «զունատվել» արմատից է:
4. նա նկարագրում է իր ծարավը և փափագը որպես արդյունք չոր ու ամայի երկրում գտնվելու, որտեղ ջուր չկա (տես՝ Սաղմ. 143:6). հաճախ Աստված նկարագրվում է որպես «կենդանի ջրի» աղբյուր (տես՝ Եսայի 12:3, 44:3, 55:1, Երեմ. 2:13, Հովի. 4:10, 7:37-38, Հայտն. 21:6, 22:17):

Չոր երկրում Աստծո այս անհագ փնտրտուքի պատճառը նախկինում իր ունեցած թարմացնող ուրախությունն էր, որ վերապրել էր տաճարում երկրպագելիս (Սաղմ. 63:2):

1. տեսնել Նրան սրբարանում (բառացի՝ «սրբության մեջ», տես՝ Սաղմ. 60:6, 89:35, 102:19) – BDB 302, KB 301, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ. այս բառը կարող է նշանակել սրբարան, սակայն պարտադիր չէ, որ նշանակի այդ. ես չեմ կարծում, որ պոեմի այս տողը լիազորում է, որ անձը գերության մեջ էր. AB (էջ՝ 97) անգամ առաջարկում է «երկնային սրբարան» Սաղմ. 63:2-ում և «հավիտենական կյանք» Սաղմ. 63:4-ում:
2. տեսնեմ Նրա զորությունը – BDB 906, KB 1157, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, տես՝ Սաղմ . 59:17, 62:11
3. Նրա փառքը – BDB ԲԱՅ ենթադրվում է ինչպես վերոնշյալը (կրկնակի ՍՏՈՐՈԳՅԱԼ)

Ստույգ, թե ինչպես է զորությունը և փառքը դրսևորվել, տրված չէ, բայց քանի որ «փառք» բառը կիրառված է *Շեխինա* փառքի առումով (այսինքն՝ ամպ)՝ անապատում դեգերելու ընթացքում (տես՝ Ելից 16:7, 10, 24:16, 17, 40:34,35, Ղևտ. 9, 6,23, Թվոց 14:10, 16:19, 20:6), հավանաբար մի բան, որ

նման է 3 Թագ. 8:11-ում նորից կրկնվեց (մյուս տարբերակը հենց Աստծո տեսիլքն է, ինչպես Եսայի 6 և Եզեկիել 1, 10-ում է):

63:3-5 Այս համարները նկարագրում են, թե ինչպես է սաղմոսերգուն փառաբանում, քանի որ Աստծո բարեսիրությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)) ավելի լավ է, քան կյանքը:

1. նրա շրթունքները փառաբանելու են Աստծուն – BDB 986 II, KB 1387, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
2. նա օրհնելու է Աստծուն քանի դեռ ապրում է – BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
3. նա իր ձեռքերը բարձրացնելու է – BDB 669, KB 724, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. նրա անձը կշտանալու է – BDB 959, KB 1302, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 36:8
5. ուրախ շրթունքներով է Նրան փառաբանելու – BDB 237 II, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

63:4 «ձեռքերս դեպի վեր բարձրացնեմ» Տես Սաղմ. 28:2-ի գրառումը:

❖ «Քո անունով» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵ ԱՆՈՒՆԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 63:6-8

⁶Երբ Քեզ եմ հիշում անկողնուս վրա,
Ու Քո մասին մտորում գիշերային հսկումի ժամերին,
⁷Քանի որ Դու իմ օգնությունը եղար,
Ու Քո թևերի հովանու տակ գնձալու եմ:
⁸Իմ անձը ամուր կառչում է Քեզնից,
Աջ ձեռքդ պահում է ինձ:

63:6-8 Այս պարբերությունը շարունակում է սաղմոսերգուի անդրադարձը Աստծո բարության ու հոգատարությանը:

1. նա քնելիս հիշում է Աստծուն – BDB 269, KB 269, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 2 Օրինաց 6:6-9, Սաղմ. 119:15, 48, 97, 99
2. նա գիշերով խորհրդածում է Աստծո մասին – BDB 211 I, KB 237, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ .4:4
3. Աստված եղել է նրա օգնությունը (BDB 740 I) – BDB 224, KB 243, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 27:9
4. նա պաշտպանված է (Աստծո թևերի հովանու տակ) և ուրախության երգ է երգում – BDB 943, KB 1247, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
5. նա (բառացի՝ *nephesh*) ապավինում է Աստծուն – BDB 179, KB 209, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Ծննդ. 2:24, Հռութ 1:14, 4 Թագ. 18:6
6. Աստծո աջ ձեռքը բարձրացնում է նրան – BDB 1069, KB 1751, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 18:35, 41:12

Նկատե՛ք, թե ինչպես է #5 և #6 արտացոլում ուխտի փոխհարաբերության երկու կողմերը: Այն մղում է ընտրությունների և գործողությունների թե՛ Աստծո, և թե՛ մարդկանց կողմից:

63:7 «Քո թևերի հովանու տակ» Տես Սաղմ. 17:8-ի գրառումը և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ:

63:8 «աջ ձեռք» Տես Սաղմ. 18:35 գրառումը և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 63:9-11

⁹Բայց իմ անձը կորստյան մատնել ցանկացողները
Երկրի ամենախորքերն են գնալու,
¹⁰Սրի են մատնվելու, աղվեսների բաժին են դառնալու:

**¹¹Բայց թագավորը Աստծով է ուրախանալու,
Բոլոր նրանով երդվողները պարծենալու են,
Իսկ ստախոսների բերանը կասեցվելու է:**

63:9-11 Ինչպես որ հաճախ է Սաղմոսներում տեղի ունենում, մի պարբերությունը անդրադառնում է սաղմոսերգուի թշնամիներին: Այս մեկում «թագավորն» է հասուկ կերպով նշվում: Սա կարող է նշանակել՝

1. թագավորը հենց սաղմոսերգուն է
2. սաղմոսերգուն անդրադառնում է այն խնդիրներին, որ առերեսվել էր թագավորը և արտահայտում է, թե ինչպես գիտի, որ թագավորն իրեն կզգար (տես՝ Սաղմ. 63:11ա)
3. սա անհատական Սաղմոսները հավաքական Սաղմոսների հետ կապելու գրական տեխնիկա է (տես՝ Սաղմ. 63:11բ):

Սրանք թշնամիների վերաբերյալ հայտարարություններ են (այսինքն՝ նրանք, ովքեր փնտրում են իր կյանքը կործանելու համար և հետևաբար՝ Իսրայելի):

1. նրանք երկրի ամենախորքերն են գնալու (այսինքն՝ Գուրը, *Շեղր*, գերեզմանը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ): ՀԿ-ում բոլոր մարդիկ գնում էին *Շեղր*, ինչպես որ բոլոր մարդիկ գնում են դժոխք ՆԿ-ում, որպեսզի սպասեն դատաստանի օրվան: Հնարավոր է, որ «ամենացած, ամենախորը տեղը» ներկայացնում էր անհավատ հետևորդների կամ հեթանոսների բնակությունը:
2. սրի են մատնվելու – BDB 620, KB 669, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
3. աղվեսների բաժին են դառնալու (այսինքն՝ առանց պատշաճ թաղման)
4. ստախոսների բերանը կասեցվելու է – BDB 698, KB 55, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ

Դրա պատճառով՝

1. թագավորը ցնձալու է Աստծով – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. բոլոր Նրանով երդվողները (BDB 989, KB 1396, *Niphal* ԴԵՐԲԱՅ) պարծենալու են – BDB 237, KB 248, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Եսայի 48:1, 65:16

Իրավունքը, ճշմարտությունը և հավատքը հաղթելու են վերջում՝ մեր Աստծո բնավորության և նպատակների համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞վ է այս Սաղմոսը նման Սաղմոս 42-ին:
2. Արդյո՞ք սաղմոսերգուն գերության մեջ էր: Ինչո՞ւ և ինչո՞ւ՝ ոչ:
3. Ի՞նչ նկատի ունի Սաղմոս 63:2բ:
4. Ի՞նչ եք կարծում, որտեղ է տեղի ունենում Սաղմոս 63:3-5-ը:
5. Ովքե՞ր են Սաղմոս 63:9-10-ի թշնամիները:
6. Արդյո՞ք սա արքայական Սաղմոս է: Ինչո՞ւ և ինչո՞ւ՝ ոչ: